

կ'ունենայ կազմութիւնը խորհրդականներու ժողովին. 1758 ին նորոգել տուած է այն հրովարտակը՝ որով Հայք իրաւունք կ'ունենան Յունաց հետ Ս. Գերեզման մտնելու Զատկի ճրագաւայցի օրը լուսահանութեան համար. այս առթիւ կը նորոգուի նաև Հայոց վանքերու սեփականութիւններու հրովարտակները. (Սաւադան էջ 934): Թէոդորոս պարք. կը վախճանի 1761 ին: Իր տապանագիրն է հետեւեալը.

«Այս է հանգիստ իւր տապանի
Առն մեծի բարերջանկի
Թէոդորոս Սըրբազանի
Սրբոյ զահիս Պատրիարգի.
Էր նահանգաւ Տարօնացի.
Բնիկ զիւղէն Խորենացի
Լի աւուրբք որ ծերութեան
Հանգեաւ առ տէր բարի մահուամբ,
Թ՛վին Հայոց Յաբեթական
ՌԺ քառ յոբելեան,
Դեկտեմբերի կոյսն ընդ ինքեան»

ԹէՈԴՈՐՈՍ Բ. ՎԱՆՅԻ.— (1801-1818). Նւ. Կարնոյ, Ակնայ, Ռուսելիի և Քիլիի 1750 ին, Փկե. 1750 ին: Եպս. կը ձեռնադրուի 1788 ին. Նւ. Թիֆլիսի 1790 ին. զարպասընկալ 1801 ին, կ'ընտրուի պարք. 1801 Յուլիս 23 ին. Հնդկաստան և Ռուսաստան կոնդակներ կը ղրկէ 1803 ին և կը պարզէ Ս. Յակոբի վանքին տապանապալի վիճակը ծանր պարտքերու պատճառաւ և կը խնդրէ օգնութիւն վերահաս վտանգէն ազատուելու համար: Հնդկահայոց գրուած վերոյիշեալ կոնդակը՝ որ ՌՄԾԲ (= 1803) թուականն ունի եւ կը գտնուի Սրբոյ Երուսաղէմի յեթիև պաշտօնեաց նուիրակ... Յակոբ արեղայ ստորագրութեամբ: Այս կոնդակին օրինակը Ս. Յակոբի վանքը բերած է Հնդկաց Նւ. Ներսէս Ծ. վրդ. Գէորգեան. (Սիօն 1875, էջ 32-37):

Թէոդորոս պարք. ին գլխաւոր յիշատակներն են, (ՄՁ. Թ. 85), Ս. Յակոբի գմբէթին շուրջ դրուած երկաթէ ճաղը, առանձին ոտանաւոր յիշատակարանով մը, և լուսամուտներուն երկաթէ վանդակապատները. ականակուռ և մարգարտաշար սաղաւարտ մը, բարձր ու լայնանիստ արծաթեայ աշտանակ մը, որ տարին երկու անգամ Տեառնեղբօր Ս. Աթոռոյ առջև կը վառ-